02/20/06 - «Դիզայն» մասնագիտության դիմորդների համար
«**ԿՈՄՊՈԶԻՑԻԱ**» քննական առարկայի առաջադրանքի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննական առաջադրանք - ընտրված երկրաչափական մարմինների համակցմամբ ստեղծել ծավալային եռաչափ կոմպոզիցիա՝ կատարելով այն երկու կետով կառուցվող հեռանկարի սկզբունքով և լուսաստվերային մշակմամբ:

Առաջադրանքի կատարման համար վիճակահանության սկզբունքով թվով 10 (տաս) երկրաչափական մարմիններից /***խորանարդ, գլան, գունդ, կոն, քառանկյուն բուրգ, վեցանկյուն պրիզմա, ուղղանկյուն պրիզմա, սալիկ՝քառանկյուն, սալիկ՝ վեցանկյուն, տափօղակ,***/,
ընտրվում են 5 (հինգ) երկրաչափական մարմիններ, որոնցից յուրաքանչյուրը քննական առաջադրանքում պարտադիր է կիրառել 2 և ավել անգամ:

Կատարման նյութ - աշխատանքը կատարվում է A3 ձևաչափի գծագրական թղթի վրա (վատման)՝ գրաֆիտե սև մատիտով:
Թույլատրվում է գծագրական գործիքների կիրառումը:

Նպատակ - ներկայացված կոմպոզիցիայի դիտարկմամբ ստուգել և գնահատել դիմորդի ստեղծագործական կարողությունները և կատարողական հմտությունները՝ քննական պահանջների պահպանմամբ:

Քննական պահանջներ -

- Առաջադրանքը կատարել A3 ձևաչափի գծագրական թղթի վրա (վատման), հորիզոնական կամ ուղղահայաց դասավորությամբ, կարևորելով ընդհանուր կոմպոզիցիայի տեղադրման և համաչափական սկզբունքները:

- Կոմպոզիցիայի ամբողջական կառուցում՝ բացառելով խորը հեռանկարի բազմապլանային կատարման սկզբունքը:
- Ապահովել ինչպես ընդհանուր կոմպոզիցիայի, այնպես էլ կոմպոզիցիայում կիրառված առանձին երկրաչափական մարմինների՝ երկու կետով հեռանկարի կառուցումը:
- Կատարել առաջադրանքի լուսաստվերային մշակում՝ գծանկարի շտրիխային տեխնիկայով:
- Ծավալային կոմպոզիցիայի դիտման կետը և պայմանական լույսի աղբյուրը ընտրել ըստ հայեցողության:
- Աշխատանքում կիրառել համակցման /մեկ մարմինը մյուսով հատման/, մասնատման և հանման սկզբունքները:
- Վիճակահանության սկզբունքով ընտրված թվով 5 (հինգ) երկրաչափական մարմինները կոմպոզիցիոն առաջարկում պարտադիր կիրառել յուրաքանչյուրը 2 և ավել անգամ:

Աշխատանքի կատարման համար տրվում է **4 ժամ (240 րոպե)**՝ առանց ընդմիջման:

Աշխատանքի գնահատման համար կարևորվում է ներկայացված պահանջների ապահովումը:

Նախապես ծածկագրված քննական աշխատանքը ստուգվում և գնահատվում է քննական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից անհատապես՝ համաձայն կից ներկայացված գնահատման չափանիշների: Ստացված գումարային միավորը միջինացվում է 20.00 (քսան) միավորի սահմանում: Դրական են համարվում 08.00 (ութ) և բարձր միավորները (համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի № 597-Ն որոշման), գնահատման միավորները նշանակվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ:

Քննական աշխատանքի գնահատման չափանիշներ

№	Հիմնական չափանիշներ	№	Պարամետրեր	Միավորներ	
1.	**Կոմպոզիցիոն լուծում**	1	A3 ձևաչափում կոմպոզիցիայի գրագետ տեղադրում	5	20
		2	Կոմպոզիցիոն մտահղացման ինքնատիպ և կերպարային լուծում		
		3	Երկրաչափական մարմինների համակցման սկզբունքի /մեկ մարմինը մյուսով հատման/ կիրառում		
		4.	Երկրաչափական մարմինների մասնատման սկզբունքի կիրառում		
		5.	Երկրաչափական մարմինների հանման սկզբունքի կիրառում		
2.	**Կառուցում**	1.	Համակցվող՝ /մեկ մարմինը մյուսով հատվող/ երկրաչափական մարմինների գրագետ կառուցում	5	
		2.	Մասնատված երկրաչափական մարմինների գրագետ կառուցում		
		3.	Եկրաչափական մարմիններից ռելիեֆային ձևափոխում և գրագետ կառուցում՝ հանման եղանակով		
		4.	Երկու կետով կառուցվող հեռանկարի պահանջների պահպանում		
		5.	Երկրաչափական մարմինների կառուցման գծային թույլ արտահայտում		
3.	**Կատարողական հմտություններ և կարողություններ**	1.	Լուսաստվերային մշակում	5	
		2.	Տոնային մշակում		
		3.	Գծանկարի շտրիխային տեխնիկայի տիրապետում		
		4.	Կոմպոզիցիայի դիտման կետի ընտրություն		
		5.	Համաչափությունների պահպանում		
4.	**Աշխատանքի ամփոփում**	1.	Աշխատանքի ավարտվածություն	5	
		2.	Աշխատանքի մատուցում		
		3.	Աշխատանքի արտահայտչականություն		
		4.	Կոմպոզիցիոն մտահղացման բարդություն		
		5.	Կոմպոզիցիոն մտքի լիարժեք բացահայտում		